



# Armenian Church Of Our Saviour

Ա. ՓԲԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ

27173

Rev. Fr. Garabed Kochakian  
Pastor

Զ Փետրուար 1981

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եղբ

Սիրելի Սրբազն Հայր,

Այսու կուգանք յայտնել Զերդ Սրբազնութեան թէ Եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը զումարուեցաւ Կիրակի, Յունուսար 25, 1981 Սուրբ Պատարագի մատուցման ետք 73 անդամներով ներկայութեան: Քուէարկութեան 218 տրատու անդամներ մասնակցեցան: Եկեղեցւոյս անդամներուն թիւն է 551:

Օրինասոր Կերպով կատարուեցաւ ընտրութիւնը ծխական նոր հուրդին, Թեմական Պատգամատրներուն, Ընտրողական Յանձնախութեան եւ Հաշուեքննիչ Յանձնախութեան: Ծխական նոր հուրդի նորընտիր անդամներ են Տիարը՝ Լութվիկ ճերի Ստեփանեան, Արթոր Եակնեան, Ասպետ Զագարեան, Գէնէթ Գրիգորեան եւ Տիկ. Մէրին Անարոնեան: Յաջորդ առաւելագոյն քուէ ստացած անձն է Օր. Էնն Յովինէսեան:

Համաձայն Զերդ Սրբազնութեան նոյեմբեր 24, 1980 Թուակիր թիւ 27092 շրջաբրականին, ներփակ կը գտնէք Եկեղեցւոյս տարեկան տեղեկագիրներու պրակը, ինչպէս նաև ծխական ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց քուէաթուղթէն օրինակ մը թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով, Թեմական Պատգամատրներու անուններ, հասցէններ եւ հեռաձայնի թիւերը, Եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներու անունները, հասցէնները եւ հեռաձայնի թիւերը, Առաջնորդարանէն դրկուած տպագրեալ տեղեկագիրները անհրաժեշտ ստորագրութիւններով, ծխական ժողովի ատենապետթիւնը, ծխական ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիու եւ անդամներուն դրկուած հրասիրագրէն ու օրակարգէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Զերդ բարձր նկատողութեան կ' սպասենք ծխական նոր հուրդի ընտրութեանց վասերացման եւ Թեմական Պատգամատրներու ընտրութեանց վասերացման: Թեմական Պատգամատրներու նորընտիր անդամներ են Տիարը՝ Պարթեւ Տէր Պաղասարեան, Սէթրակ Պիլէզերեան, Սունի Խաչառուրեան, Զաւէն Գասպարեան, ծան Մրգիկեան, եւ ծան Թորոմանեան:

Մնամք խոր հուրդաբար աղօթակից ի դիմաց ծխական ժողովի

**Տ. Կարապետ Ֆլու. Խոչարեան**

Տ. Կարապետ Քահաբայ Քոչարեան Նախազան

